WIEN 4.2.97

№ 6 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16 1897 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 16 № 6

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ՄՇԱԿ"
(25-ՐԴ ՏԱՐԻ)
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1897 ԹՒԱԿԱՆԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Տարեկան գինը՝ 10 րուբլի, կէս տարվանը՝ 6 րուբլի
Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

Կարապետ, Մկրտիչ, Արշակ, Առաքել, Աւետիս Աւագեանցները, Արուսեակ Կարապետեան, Տիրուհի Յովակիմեան Աւագեանցները, Աղասար Ոսկանեանց, խորին վշտով յայտնելով ազգականներին և ծանօթներին առաջինների սիրելի մօր, երկրորդների՝ սկեսուր և երրորդի քրոջ

ՏԻՐՈՒՀԻ ՈՍԿԱՆԵԱՆ ԱՒԱԳԵԱՆՑԻ

մահվան մասին, խնդրում են չնորհ բերել հանգուցեալի թաղմանը կիրակի, յունվարի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, Քարափի սուրբ Յակոբ եկեղեցուն պատկանող տանից, դէպի նոյն ս. Յակոբ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: Ամբիծքը կատարվում է ամեն օր երեկոյեան ժամը 6-ին:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ անպատրաստ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի կառավարչապետի շրջաբերականը. Օրէցօր. Կնոջ մասնակցութիւնը. Նամակ Շուշուց. Նամակ Թելաւից. Նամակ Բօստօնից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Մակեդօնիա.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էջմիածնի գաւառի գաղթականները.

ԴԱՐՁԵԱԼ ԱՆՊԱՏՐԱՍՏ

Երբ խօլերան երևաց մեր կողմերում, մեր երկիրը բոլորովին անպատրաստ գտնվեց նրա դէմ մաքառելու: Ամեն տեղ նա գտաւ իր զարգացման և տարածման համար շատ նպաստաւոր պայմաններ: Սարսափելի հիւրի առաջին ամենազարհուրելի կոտորածներից յետոյ բոլոր քաղաքները յետ նայեցին իրանց առողջապահական վիճակի վրա և յուսահատութիւն պատեց ամենքին: Առաջին, ամենաթեթև հետազօտութիւնը ցոյց տուեց, որ խօլերայի տարածման նպաստող բոլոր պայմաններն էլ կան մեր երկրում և կատաղի հիւանդութիւնը առատ հունձ կարող է վերցնել մեր երկրից: Ունևոր մարդիկ միայն մի ելք գտան ազատվելու սարսափելի չարիքից՝ թողնել իրանց բնակութեան տեղերը և փախչել լեռները, ուր առողջապահական պայմանները լաւ են միայն բնութեան պատճառով, իսկ չքաւորները մնացին իրանց տեղերում, մատնելով իրանց կեանքը բաղդի բերմանքին և հաճոյքին:

Եթէ ժանտախտը, անսպասելի կերպով, կը մօտենայ մեր երկրի սահմաններին, մենք դարձեալ ամենաթշուառ դրութեան մէջ կը լինենք. մենք նրան արգելք լինելու ոչ մի միջոց չունենք և դեռ աւելի ևս յուսահատ վիճակի մէջ կը զգանք մեզ, որովհետև ժանտախտը աւելի սարսափելի, աւելի անխնայ հիւանդութիւն է, քան խօլերան: Ժանտախտը այնպէս արագ կանցնի երկրի մէկ ծայրից միւս ծայրը, որ մենք ժամանակ չենք ունենայ նոյն իսկ հետևել նրա նուաճման ճանապարհներին:

Հնդկաստանում նկատած է, որ եւրոպական թաղերը, ուր տիրում է աւելի մաքրութիւն և բարեկեցութիւն, ժանտախտը քիչ կոտորածներ է անում, իսկ ժողովրդի ստորին խաւերում հարիւրաւոր և հազարաւոր զոհեր է տանում:

Ամօթ է, որ մենք միշտ անպատրաստ ենք գտնվում այդպիսի սարսափելի դէպքերում. իսկ այժմ գոնէ արհաւիրքի սպառնալիքի առաջ նայենք մեր շուրջը և անյապաղ սկսենք եռանդուն գործունէութիւն մեր առողջապահական պայմանները բարւոքելու համար: Մեր անհոգութեան պատիժը կարող է չափազանց խիստ և կոտորաբեր լինել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

—

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետը հետևեալ շրջաբերականն է ուղղել Կովկասի պ.պ. նահանգապետներին և շրջանների գլխաւորներին, յունվարի 10-ին № 289:

«Թագաւոր կայսրը, համաձայն ներքին գործերի մինիստրի ամենահպատակօրէն զեկուցման, անցեալ դեկտեմբեր ամսի 11-ին ամենաողորմածաբար բարեհաճեց թոյլատրել բանալ ամբողջ կայսրութեան մէջ նուէրների հանգանակութիւն, Թիւրքիայից մեր սահմանները փախած հայերի վիճակը թեթևացնելու համար, այն պայմանով, որ նուէրները ընդունեն բացառապէս այն կառավարչական հաստատութիւնները և անձերը, որոնք լիազօրութիւն ստացած կը լինեն այդ մասին, իսկ հաւաքված գումարները, տեղական նահանգապետների միջոցով, յանձնվեն Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի և նրա անմիջական հսկողութեամբ ու կարգադրութեամբ բաշխվեն կարօտեալներին:

«Ի նկատի ունենալով այդ Բարձրագոյն հրամանը, որ յայտնված է ներքին գործերի մինիստրի կողմից անցեալ դեկտեմբերի 19-ին պ.պ. նահանգապետներին ի կատարումն և հաղորդված է ինձ [illegible] Գօրեմկինի գրութեամբ նոյն թուի № 21702, ես անհրաժեշտ համարեցի.

1) Յանձնել յիշեալ նուէրների ընդունելութիւնը գաւառական, քաղաքային և նահանգական ոստիկանական վարչութիւններին, որի մասին հարկաւոր է հրատարակել տեղական լրագիրներում.

2) Այդ կարգից դուրս՝ չը թոյլատրել նուէրների ընդունելութիւն ուրիշ հաստատութիւնների, մասնաւոր անձերի և ընկերութիւնների ձեռքով, և

3) Հաղորդել պարբերաբար, ամեն երկու շաբաթը մի անգամ, կովկասեան գլխաւոր իշխանութեան, ճիշդ տեղեկութիւններ ոստիկանական վարչութիւնների մէջ մտած նուէրների քանակութեան, ինչպէս և ամեն մի գաւառի կարիքի չափերի մասին, հաստատելով այդ տեղեկութիւնները պատշաճաւոր հաշիւներով և կցելով նահանգի կամ շրջանի իշխանութեան ենթադրութիւնները յիշեալ նուէրները Թիւրքիայից եկած կարօտեալ հայ գաղթականների մէջ բաժանելու մասին, եթէ կան այդպիսիները այդ իշխանութեան գործողութեան շրջանում, և առհասարակ, այդ նուէրների ապագայ գործադրութեան մասին: Վերոգրեալի մասին պատիւ ունեմ հաղորդել Կովկասեան երկրի պ.պ. նահանգապետներին և շրջանների գլխաւորներին ի պատշաճաւոր տնօրէնութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

(Նամակ Վաղարշապատից)

—

Յունվարի 3-ին

Վաղարշապատում և նրա լայնատարած գաւառի հայաբնակ գիւղերում ցրված գաղթականների թիւը, որ առաջ հասնում էր հազիւ միայն 600 ի, վերջին ամիսների ընթացքում, շնորհիւ Իգդիրից եկող նորեկ գաղթականների, օր օրի վրա աւելանալով, այժմ անցնում է 1250 հոգուց: Դրանց կարիքները տեղն ու տեղը ստուգելու նպատակով, Բարեգործական ընկերութեան տեղական վարչութեան անդամները երկու անգամ անձամբ շրջել են գիւղերը և գտել գաղթականներ հետևեալ քանակութեամբ.

Վաղարշապատում	66	տուն բաղկ.	279	հոգուց
Վ. Խաթունարխ	3	» »	13	»
Ն. Խաթունարխ	2	» »	11	»
Ջիրուխչի	2	» »	12	»
Մարգարա	2	» »	10	»
Ղուրղուղուլի	4	» »	27	»
Շահրիար	3	» »	15	»
Ջաֆարաբատ	3	» »	16	»
Քիալագիարխ	2	» »	14	»
Սարդարապատ	2	» »	8	»
Մոլլաբայազիտ	6	» »	20	»
Գիչիլու	36	» »	203	»
Ջէյվա	7	» »	30	»
Ն. Այլանլու	3	» »	10	»
Ալիբեգլու	2	» »	7	»
Քեօրփալու	4	» »	19	»
Հայթաղ	9	» »	35	»
Սամաղար	10	» »	46	»
Վ. Այլանլու	6	» »	23	»
Գրամփա	2	» »	13	»
Հաջիլար	1	» »	4	»
Հաջիղարա	3	» »	15	»
Խզնաուզ	2	» »	9	»
Օշական	3	» »	20	»
Ղզլթամիր	6	» »	40	»
Աշտարակ	9	» »	49	»
Կոշ	4	» »	21	»
Կարբի	3	» »	16	»
Աղջաղալա	1	» »	7	»
Էմլիլար	1	» »	6	»
Աբարան *)	1	» »	4	»
Գումարը 30 գիւղերում՝	209	տուն բաղ.	1002	հ.

Բացի վարչութեան ստուգած 1002 գաղթականներից, այստեղի գաւառապետի ստացած տեղեկութիւնների համաձայն, Թալինում և նրա շրջակայ գիւղերում կան 200 գաղթականներ, իսկ գաւառի մնացած հայաբնակ գիւղերը, ուր չը կային գաղթականներ, Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ նորից ուղարկված են 50 ից աւելի անձինք: Այս բոլոր վերջիններին վարչութիւնը չը կարողանալով անձամբ ստուգել, պաշտօնական գրութեամբ դիմել է գիւղական քահանաներին և տանուտէրերին, որ գիւղական իշխանների ներկայութեամբ քննեն չը ստուգված գաղթականների թիւն ու կարիքները և յայտնեն վարչութեանը:

Գաւառի գիւղերում ցրված գաղթականները, շնորհիւ հայ գիւղացիների հիւրասիրութեան և առատաձեռն նուէրների, քիչ-շատ ապահոված կարելի է համարել՝ բնակարանի, հացի և վառելիքի կողմից: Սակայն հագուստի և անկողնու կողմից միանգամայն զուրկ են, մանաւանդ կանայք, պատանիներն ու երեխաները: Իսկ ինչ վերաբերում է Վաղարշապատում տեղաւորված գաղթականներին, ցաւելով պէտք է ասենք, որ գիւղի ինտելիգենցիան միանգամայն անտարբեր է դէպի գաղթականների թշուառ դրութիւնը և վանքն էլ, բացի միայն 5—6 տուն գաղթականներից, ուրիշ ոչ ոքի հաց չէ տալիս, իսկ գիւղի վաճառական և արհեստաւոր դասակարգը, ունենալով բազմաթիւ տեղացի աղքատներ և չքաւորներ, հազիւ է կարողանում իր չափաւոր աշխատանքից օգնութեան հասնել գիւղի չքաւորներին և գաղթականների մի մասին միայն, մանաւանդ այս տարի, երբ վանքը գիւղի չքաւորներին դեռ ևս ցորեն չէ բաժանել:

Գաղթականների դրութիւնը բարւոքելու համար Բարեգործական ընկերութեան տեղական վարչութիւնը ստացել է խորհրդից մինչև այժմ 400 րուբլի, որը գործադրվել է՝ հացի, վառելիքի, հագուստեղէնի համար զանազան կտորների և հիւանդների համար դեղերի ու սննդի: Ստացել է նոյնպէս խորհրդից 49 հատ շինել, 600 արշին կտաւ և մէկ արկղ պատրաստի հագուստեղէն, իսկ Եղլամայից, Սուքիաս սրբազանի միջոցով, ստացել է նոյնպէս մէկ արկղ պատրաստի հագուստեղէն: Բացի դրանից վարչութիւնը փոխարինաբար գնել է՝ նորից 500 ր. կտորներ և, տեղացի տիկինների և օրիորդների սիրայօժար աջակցութեամբ և օգնութեամբ, կարել է տալիս և անմիջապէս բաժանում գաղթականներին: Սակայն կարիքը այնքան շատ է, որ այս բոլորով հազիւ կարելի լինի գաղթականների կէս մասին միայն հագցնել և պաշտպանել այս տարվայ սաստիկ ցրտերից:

Ի դէպ: Պէտք է ասենք, որ գաղթականներին օգնելու հարցը այստեղ շատ անկանոն դրութեան մէջ է, շնորհիւ այն հանգամանքի, որ վեհարանը, ստանալով զանազան կողմերից պատրաստի հագուստեղէն, մի կողմից վիրաւորվում է, երբ Բարեգործական ընկերութեան վարչութիւնը իրան դիմող չը ստուգված գաղթականներից պահանջում է դիւանատան կամ վեհարանի հաստատութիւնը այն մասին, որ նրանք փող և չոր չեն ստացել այնտեղից, իսկ միւս կողմից ինքը առանց քննելու գաղթականների դրութիւնը, առանց խտրութեան տալիս է, ով որ չինքը ծռած խնդրում է նրանից և չոր և փող: Մինչդեռ եթէ գաղթականներին օգնելու գործը այդ երկուսից մէկը վերցնէր իր վրա, կամ եթէ գիւղերում ցրված գաղթականներին բաժանէին իրանց մէջ, այն ժամանակ ոչ աւելորդ ստացողներ կը լինէին, ոչ էլ զուրկ մնացողներ: Սակայն վարչութիւնը մինչև այժմ չէ կարողանում այս օգտակար և նպատակայարմար համաձայնութիւնը կայացնել իր և վեհարանի մէջ, չը նայած բազմաթիւ խոստումներին:

Ա. Օհանջանեանց

---

*) Հեռաւորութեան և ցրտերի պատճառով անկարելի եղաւ ստուգել Թալինի և Աբարանի գաղթականների ընդհանուր թիւը: Այս մէկ ընտանիքն էլ ստուգված է այստեղ:

Ստորագրեց՝ կառավարչապետի պաշտօնակատար, նրա օգնական, ինֆանտէրիայի գեներալ
կոմս Տատիշչէվ
Հաստատեց՝ Դիւանատան դիրեկտոր Միցկեվիչ

ՕՐԷՑՕՐ

III

Այս ինչ գաղթականը երկու անգամ փող առաւ, այն ինչը մէկի տեղ երկու չոր վերցրեց, մի ուրիշը մի բաժին կերակրի տեղ երկուսը տարաւ, մի անգամ էլ սուտ խօսեց.—ահա այն մեղադրանքները, որ կրկնում են ոմանք գաղթականների հասցէին, և իսկոյն, ընդհանրացնելով, եզրակացնում՝—գաղթականների մէջ խաբեբաներ շատ կան, պէտք է զգոյշ լինել, շատ խիստ ընտրութեամբ փող և չոր բաժանել…

Որ 50 հազար գաղթականների անհագին բազմութեան մէջ կարող են լինել և մի քանի խաբեբաներ, բարոյապէս փչացած մի քանի մարդիկ, մենք, ի հարկէ, չենք կարող հերքել, ինչպէս չենք կարող հերքել և այն, որ ամեն մի հասարակութեան մէջ, ինչքան էլ նա լինի ինտելիգենտ և ապահով. փորով կուշտ, գրպանը լի, այնու ամենայնիւ, լինում են բարոյապէս փչացած մարդիկ, խաբեբաներ: Բայց հարցը նրբանումն է,—իրաւունք ունենք միթէ մի քանի անախորժ դէպքեր ի նկատի առնելով, կամ այդ թշուառների անհագին բազմութեան մէջ մի քանի ստախօսներ և ինքնասիրութիւնից զրկված մարդիկ տեսնելով, եզրակացնել, թէ գաղթականների մէջ կան բազմաթիւ խաբեբաներ, և ուրեմն մէկին մի հնամաշ չոր, կամ մի քանի կոպէկ տալիս, պէտք է մանրամասն հետազօտութեան ենթարկենք նրան, և ապա միայն լիութիւն տանք նրանց արդար պահանջին, հազար ու մի դժուարութիւններ ստեղծելուց յետոյ:

Մեր կարծիքով, այդպիսի իրաւունք չունենք: Այն բարոյական խորը զգացմունքները, որոնց վրա հիմնված է մեր հասարակութեան օգնութիւնը Թիւրքահայ նահատակ ժողովրդին մի կողմից, և այն մեծ զոհաբերութիւնը, որ կրեց այդ ժողովուրդը՝ իր հայրենիքի մէջ, միւս կողմից՝ անպայման պարտաւորութիւն են դընում մեզ վրա վարվել գաղթականների հետ վերին աստիճանի քնքոյշ կերպով, վստահութեամբ լի զգացմունքներով, անսահման բարեկամութեամբ, մի զգացմունք, որը չէ թոյլ տալիս նախ՝ կասկածել օգնութիւն խնդրողի մասին, և երկրորդ՝ բարոյական տանջանքների ենթարկել նրան, նախ քան մի քանի րուբլի տալը:

Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից, մենք գիտենք բազմաթիւ փաստեր, որ նոյն գաղթականներից շատերը, այնքան ազնիւ և այնքան օրինաւոր մարդիկ են, որ մերժել են փող վերցնել, երբ ունեցել են մի քանի օրվայ ապրուստ, մերժել են երկրորդ ձեռք չոր ստանալ, ասելով թէ արդէն մի չոր ունենք, հրաժարվել են մի քանի ծախսերից, ասելով, որ իրանք եղածով էլ բաւական են, թող այժմ օգնեն ուրիշներին, որոնք աւելի կարօտ են… Վերջապէս գիտենք և այնպիսի գաղթականներ, որոնք, իրանց ընտանիքի հետ, օրերով կարօտ են մնացել, մի կտոր հացի յոյսով միայն, բայց չեն դիմել հասարակական օգնութեան, վարժված չը լինելով խնդրելու, մուրացկանութիւն անելու…

Եթէ մեզանից իւրաքանչիւրը իրան իրաւունք է համարում օրը մի քանի տեսակ կերակուր ուտել, մի քանի տեսակ չորեր ունենալ և չը զրկել իրան շատ զուարճութիւններից, ինչու, ուրեմն, հարցնում ենք, գաղթականները, այնքան մեծ և չը տեսված տանջանքների ենթարկվելուց յետոյ, գաղթականները, որոնք իսկապէս ծոյլ և աշխատանքից փախչող մուրացկաններ չեն, այլ համակրելի աշխատաւորներ, իրաւունք չը պէտք է ունենան, այդքան զրկանքներից յետոյ, մի քանի ամիս մի քիչ լաւ ուտել, լաւ հագնվել և հանգիստ ապրել…

Աշխարհը չի քանդվի, եթէ մի քանի տասնեակ գաղթականներ մէկի տեղ երկու րուբլի ստանան, մէկ աման կերակուրի տեղ երկու աման, և դա երբէք առիթ չի պիտի տայ խախտելու այն մեծ սէրը, որով ներշնչված է մեր հասարակութիւնը դէպի հայաստանցի եղբայրները, և այն մեծ հաւատը, որ նրանք տածում էին դէպի Կովկասի հայերը՝ ապաւինելով մեր երկիրը և մեր օգնութեան: Տուէք առատութեամբ, տուէք լի ձեռքով, տուէք քաղցրութեամբ և առանց կասկածի, որովհետև դրա մէջ է միակ մխիթարութիւնը այն ժողովրդի, որ ընկաւ անհաւասար կռւի մէջ, և դրեց իր գլխին նահատակի պսակը…

Խ. Մալումեան

ԿՆՈՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հասարակական որ և է աղետի, թշուառութեան ժամանակ իր կարողութեան չափ օգնելը իւրաքանչիւր անհատի, ուրեմն և ամեն մի կնոջ բարոյական պարտքն է: Կնոջ ամենաառաջին և անգնահատելի յատկութիւններից մէկը—նրա բարի, զգայուն հոգին ու սիրտն է—մի գանձ, որը հրեշտակային անունն է վաստակել: Բարի, զգայուն, հրեշտակային սիրտ, ով չի խոնարհվի դրա առաջ: Հասարակական այսպիսի աղետի ժամանակ, ինչպէս է Թիւրքաց հայերի ներկայ աղետը, հայ կինը պարտաւոր է բանալ իր կարեկցող սիրտը, և մօտենալ նրանց: Մենք հաւատում ենք և սպասում ենք, որ հայ կինը, թէև կապված և կաշկանդած ճընշող բազկից, թէև իր հասարակական դիրքը կորցրած զանազան հանգամանքների շնորհիւ, սակայն այժմ կը կարողանայ ցոյց տալ իր հոգու և սրտի ամբողջ վեհութիւնը: Մխիթարական են առաւել ինքնաբաւականութեամբ չպըրտած թէկուզ հարիւրները, մխիթարական են կնոջ անձնական մասնակցութիւնը և նրա ցոյց տուած կարեկցութիւնը այդ գործում: Բանալ ձրի ճաշարաններ, կառավարել դրանց, արհեստներ սովորեցնել որբ, անօգնական և անպաշտպան քոյրերին, նրանց համար հագուստներ ժողովել, նորերը կարել, նրանց մխիթարել խօսքով,—ահա թէ ինչ պիտի անի կինը և ահա թէ ինչն է թանգ թշուառի համար:

Դուք, հայ տիկիններ, երևակայում էք, թէ ինչ կը նշանակէ զաւակին մօր աչքերի առջև հաւի նման մորթել կամ քաղցածութիւնից մօր գրկում յաւիտեան հանգչել, կամ շատ է պատահել ձեզ լսել «քաղցած եմ» կամ «մրսում եմ, մայրիկ ջան» սիրտ կտրտող խօսքերը: Որքան ծանր է, երբ զաւակը հաց է խնդրում—չը մեռնելու համար, հագուստ—ցրտից չը սառչելու համար և մայրը չէ կարողանում տալ: Իսկ կերակուրի փոխարէն երեխային խոտ տալ, չորի փոխարէն նրան մոխրի մէջ դնել—այդպիսի բան լսել էք: Ընթերցող մայրեր, չենք ցանկանում ձեզ այդպիսի տեսարաններ, սակայն ցանկանում ենք, որ ձեր երևակայութիւնը կարողանայ այդ թշուառութիւնը ընդգրկել և ձեզ զգացնել տալ:

Օրէնքը կնոջը թոյլ չէ տալիս դատաւոր լինել և դատել, ընտրել և ընտրվել, սակայն նոյն և դրանից աւելի վեհ՝ բնական օրէնքը—բարոյական պարտքը չէ արգելում և պահանջում է կարեկցութեան և օգնութեան ձեռք մեկնել քաղցից մեռնողին, ցրտից սառչողին…

Որքան վեհ ես, կին, քո բարի, զգայուն, հրեշտակային սրտով, բայց և որքան անգնահատելի և պաշտելի ես քո այդ յատկութիւններովդ գործի մէջ, երբ մի հագուստով ես բաւականանում, իսկ միւսով մի քանի մերկերի ծածկում, երբ մի տեսակ կերակուրով ես կշտանում, իսկ միւսով մի քանիսների կեանքը մահվան դաժան ճանկերից խլում, երբ թողած անմիտ շռայլ հրաւէրները, անտեղի և աւելորդ գնալ-գալը, անդադար չորեր ես կարում, նրանց բաժանում, նկուղները այցելում, հիւանդներին դեղեր տալիս, մխիթարում… Որքան գեղեցիկ և հրապուրիչ ես այդ ժամանակ,—խճճված մազերով, ճմլված հագուստով, յոգնած, բայց կարեկցութիւն արտայայտող կրակված դէմքով ու աչքերով: Եւ մենք առաջինն ենք խոնարհվում քո առաջ:

Ռ. Յ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունվարի 12-ին

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը յունվարի 10-ից՝ կառավարութեան թոյլտւութեամբ, բացեց ձրի ճաշարան Թիւրքահայ գաղթականների համար: Ճաշարանը բացված է քաղաքի վերին թաղի եկեղեցու սենեակներում: Ճաշող գաղթականների թիւը հասնում է 20-ի, որոնք մի և նոյն շինութեան մէջ էլ կենում են: Ճրագալոյցի երեկոյեան թեմական դպրոցի ուսուցիչները, տեսուչ Մեսրոպ վարդապետի մասնակցութեամբ՝ «խորհուրդ մեծ» մանգալով, ինչպէս արդէն գրված է, ժողովել են գաղթականների օգտին մօտ 1000 րուբլի: Դրանից 100 րուբլի տալով Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղի ճաշարանին, մնացածը ուղարկել են Կարս, Վաղարշապատ և ուրիշ տեղերի գաղթականների համար:

Սիրողների խումբը պատրաստում է մի ներկայացում բարեգործական ընկերութեան օգտին:

Քաղաքային վարչութիւնը գործի մէջ կը մտնէ մօտաւորապէս յունվարի վերջերին: Առ այժմ կատարվում են քաղաքային գործերի յանձնումը և ստացումը:

Տ.

ՆԱՄԱԿ ԹԵԼԱՒԻՑ

Յունվարի 3-ին

Դեկտեմբերի 31-ին, Հայոց Բարեգործական ընկերութեան թատրոնի դահլիճում կայացաւ մեր քաղաքային ինքնավարութեան բացումը ձայնաւորների մի մասի և փոքրաթիւ հասարակութեան ներկայութեամբ: Ժամը 1-ին պ. գաւառապետը եկաւ և պաշտօնապէս յայտարարեց, թէ այսօրվանից բացվում է Թելաւի քաղաքային ինքնավարութիւնը և իր կողմից աջողութիւն մաղթեց քաղաքային ինքնավարութեան: Գաւառապետի պաշտօնական յայտարարութիւնից յետոյ, քաղաքային աւագ Միխակ Թաթոսեանը երդում ընդունեց, որից յետոյ ռուս հոգևորականութիւնը, ի նշան գոհունակութեան քաղաքի հասարակութեան կողմից, մաղթանք կատարեց կայսերական Տան երկարակեցութեան համար: Մաղթանքից յետոյ գաւառապետը մի փոքրիկ դրամական հաշիւ կարդաց: Այդ հաշուից երևաց, որ քաղաքային առձեռն գումարը դեկտեմբեր ամսին ստացվող եկամուտի հետ միասին կազմում է 6000 ր.: Այդ առիթով գաւառապետը յայտնեց. «Ի նկատի ունեցէք, պարոններ, որ 3 տարի սրանից առաջ ես իմ նախորդից իբրև քաղաքային սեփական գումար ստացել եմ ընդամենը 4 ր. 75 կոպ., իսկ այժմ յանձնում եմ քաղաքային աւագին 6000 ր., չը հաշուելով մօտ մի հազար րուբլի գումարը, որ ես ծախսել եմ այս տարի քաղաքի համար հրշէջ գործիքներ գնելու և քաղաքի միջից հոսող հեղեղատի վարարման առաջն առնելու համար»: Ներկայ եղող հասարակութիւնը շնորհակալութիւն յայտնեց պ. գաւառապետին՝ իր հանրօգուտ և բարեխիղճ ծառայութեան համար:

Աւելորդ չենք համարում նկատել, որ մեր քաղաքի հասարակութիւնը, հէնց ինքնավարութեան բացման առաջին օրից՝ ցոյց տուեց իր զարմանալի անտարբերութիւնը, փայլելով այդ օրվայ հանդէսին իր բացակայութեամբ: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարելի սպասել, քանի որ տեղական հասարակութիւնը, չունենալով ինտելիգենցիա, մի և նոյն ժամանակ այնքան անզարգացած է, որ բոլորովին գաղափար չունի, թէ ինչ բան է ինքնավարութիւնը և ինչ նշանակութիւն կարող է ունենալ դա իր բարեկեցութեան և առաջադիմութեան համար:

Մ—ա

ՆԱՄԱԿ ՌՈՍՏՈՎԻՑ

Յունվարի 2 ին

Երկու շաբաթ առաջ, ըէալական ուսումնարանի դահլիճում, պ. Ի. Բաղեցկի կարդաց մի դասախօսութիւն «Երիտասարդ սերունդի թուլութեան պատճառների մասին»: Պ. Բաղեցկի ունի մի քանի գրուածքներ, որոնք բաւական աջող տարածվում են հասարակութեան մէջ: Նա անդամ է Պետերբուրգի «Երեխաների ֆիզիքական կրթութեանը նպաստող ընկերութեանը»: Ընկերութեան ճիւղերը բազմացնելու համար նա անցնում է քաղաքից քաղաք և կարդում է հասարակութեան առաջ դասախօսութիւններ այդ նիւթին վերաբերեալ, ցոյց է տալիս այդպիսի մի ընկերութեան անհրաժեշտութիւնը և թէ դրա բացակայութիւնից առաջացած վնասակար հետևանքները: Պ. Բաղեցկու ձեռնարկած գործը ամենահամակրելի գործերից մէկն է. նա հասարակութեան երեսին խփում է նրա տգիտութիւնը, թէ ինչպէս չը հասկանալով, նա փչացնում է երիտասարդ սերնդի ֆիզիքական ույժերը: Ահա մի մարդ, որ յանձն է առել մանկավարժի դեր կատարել հասարակութեան առաջ: Պարոնը իր դասախօսութիւնը սկսեց մի ընդհանուր տեսութիւն անելով այդպիսի ընկերութիւնների գոյութեան մասին, ցոյց տուեց թէ ինչպէս Եւրոպայում ընդհանրացած են այդ տեսակ ընկերութիւնները և իր խօսքը մասնաւորելով՝ մատնացոյց արեց Ռուսաստանում կազմակերպված այդպիսի ընկերութիւնների վրա, որոնք գոյութիւն ունեն Պետերբուրգում, Մոսկվայում, Պոլտավայում, Եկատերինոսլավում և այլն և այլն: Ապա շարունակեց մանրամասն նկարագրել տան, ուսումնարանի վարակիչ օդի և քաղաքային փոշու կործանիչ ազդեցութիւնը երեխաների օրգանիզմի վրա և դրանից առաջացած տուբերկուլօզ հիւանդութիւնները: Բացատրելով առողջարար զբօսանքի, մարմնամարզութեան, շարժուն խաղերի և ուրախութեան բացակայութիւնը, եկաւ այն եզրակացութեան, որ այդ բոլոր աննպաստ պարագաները աստիճանաբար քայքայելով երեխաների ամբողջ կազմուածքը, ժամանակի ընթացքում առաջ են բերում մի սերունդ բոլորովին քայքայված ույժերով, և այդ անբնական դրութիւնը հասցնում է երիտասարդութեանը պեսսիմիզմի: Վերջացնելով իր ճառը, հրաւիրեց ներկայ եղողներին, որ այդ մտքերը ամեն մէկը տարածէ իր շրջանում և ցանկացողը գրվի անդամ այդ նպատակին ծառայող ընկերութեանը:

Մեզ թւում է, որ դժուար չէր լինի, եթէ մեր բժիշկները կամ փորձված մանկավարժները երբեմն դուրս գային հայ հասարակութեան առաջ, խօսէին այդ տարրական, բայց անհրաժեշտ գիտելիքների մասին:

Հ. Վարդանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 8-ին

Սրանից մի քանի տարի առաջ «Արձագանքը» ի լուր բովանդակ հայ աշխարհի յայտարարեց, որ լոյս աշխարհ է եկել մի «հանճար», Արշակ Թումանեան ազգանունով, որը խոստացել էր իր «հանճարի» պտուղները նուիրել «Արձագանքին»: Եւ իրաւ, այդ միայն «Արձագանքին» պատիւ բերող «հանճարը» ամեն տեսակ գրուածներ սկսեց զետեղել այդ անբովանդակ լրագրում.—առաջնորդող յօդուածներ, բանաստեղծականներ, քննադատութիւններ, ոտանաւորութիւններ և այլն և այլն: Նա միայն վերջը արժանի կերպով ստացաւ այդ «հանճարի» դառն պըտուղները, երբ պ. Թումանեան «Արձագանքի» անդորրագիրները գրպանում սկսեց թափառել կովկասեան զանազան քաղաքները և բուն դրեց Նոր-Նախիջևանում: Սակայն, ինչպէս երևում է, այս դառը փորձով չէ ուզում բաւականանալ պ. Աբգար Յովհաննիսեան և մի նորածիլ հրապարակախօսի բերանով յայտարարում է ի զարմանս հայ աշխարհի, որ գոյութիւն ունի և մի նոր հանճար (անշուշտ յօդուածագիր պ. Ս. Ցօցիկեանի երևակայութեան մէջ) Կ. Գալֆայեան ազգանունով, որը արդէն հասել է Պարիզ: Եւ այնպիսի գոյներով է նկարագրված այդ անյայտ պարոնը, այնպիսի արտիստական բարեմասնութիւններ են յատկացրած, որին կը նախանձէր մեր անմահ Ադամեանը: Բայց գիտէք իսկապէս ով է այդ երիտասարդը, «Մշակի» յարգելի ը՛նթերցողներ: Դրան գուցէ ձեզանից շատերը տեսած լինեն Թիֆլիսի փողոցներում մի կապոց գրքեր ձեռքին: Նա ամեն տեղ նստում խօսում էր հայ դերասանների նախանձոտութեան մասին, որ նրանք վախենում են իր հետ բեմ դուրս գալ, որ ինքը այնպիսի տաղանդ է, որ Ադամեանի յիշատակը պիտի մոռացնել տայ և այլ «բանդագուշանքներ»: Բայց երբ մի անգամ բեմ դուրս եկաւ «Ղարաբաղի աստղագէտի» մէջ, և այն էլ անխօս դերում, իր միմիկայով և ձևերով միայն հասարակութիւն կուշտ ծիծաղը յարուցեց:

Ցաւալին այն չէ, որ պ. Գալֆայեան ուղևորվել է Պարիզ (դա նրա իրաւունքն է), ցաւալին այն է, որ նա Պարիզի մէջ ներկայացուցիչ պիտի լինի հայ բեմի, այն բեմի, որ իր գրկի մէջ ունեցել է Ադամեանի նման հսկայ տաղանդ և ունի այս րոպէիս Հրաչեայ, Սիրանոյշ, Մնակեան, Տէր-Դաւթեան և այլն:

Ամօթ և խայտառակութիւն: Իսկական ապագայ խոստացող երիտասարդ դերասանները միջոց չունեն Թիֆլիսից մի քայլ հեռու գնալու. իսկ նա, որը ոչ մի պիէսի, ոչ մի դերի մէջ չէ ցոյց տուել իր արտիստական ձիրքը. նա յաւակնութիւն ունի, յանուն հայ բեմի, հասարակութեան օգնութիւնը խնդրելու: Սա աւելի քան յանդգնութիւն է. դա աֆերիստութիւն է:

Եւ յանուն հայ բեմի, հրապարակով բողոքում ենք այդ աֆերիստութեան դէմ:

Դերասան Արշ. Յարութիւնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են Բագուից, որ այս օրերս Խորէն եպիսկոպոս Ստեփանէ Թիֆլիսի վրայով պէտք է ճանապարհ ընկնի Ս. Խաչ վանքը այնտեղ ապրելու համար:

—

Մեզ գրում են Երեւանից, յունվարի 12-ից, որ վանեցի մի քանի գաղթականներ, Վանի ռուսաց փոխ-հիւպատոս Մաեւսկու հետ, ճանապարհ ընկան Վան:

—

Թիֆլիսից, յունվարի 7-ից, ուղարկված է հետեւեալ հեռագիրը «Новости» լրագրին գաղթականների մասին. «Քառասուն հազար հայ գաղթականներ տեղաւորված են՝ 22 հազար Կարսի շրջանում, 14 հազար Սեւ ծովի ափերին. մնացածները Երեւանում և շրջականերում: Գաղթականներին մինչև գարուն օգնելու համար հարկաւոր են հարիւր հազարներ: Եղել են դէպքեր, որ երեխաները մեռել են ցրտից և քաղցից: Մթերքներով օգնութիւն է ստացված Մոսկվայից և Աստրախանից: Մայրաքաղաքի մամուլի համակրական վերաբերմունքը հայերն ընդունեցին երախտագիտութեամբ»:

—

Հաստատապէս կարող ենք ասել, որ Թիֆլիսի մի քանի լրագիրների հաղորդած լուրը, որ հայոց Կաթողիկոսը շուտով պէտք է գնայ Բագու,— ճիշդ չէ: Վեհափառի Բագու գնալու մտադրութիւնը յետաձգված է երկար ժամանակով:

—

Յունվարի 13-ին, Թիֆլիսի քաղաքային դուման կատարեց Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարի ընտրութիւնը: Քուէարկվեց միայն Խվանենկօ, որը և ստանալով 30 սպիտակ և 18 սեւ քուէ, ընտրվեց քաղաքագլխի պաշտօնակատար:

—

Հարկաւոր ենք համարում յիշեցնել հասարակութեանը, որ այսօր, յունվարի 16-ին, երգչուհի Ադել Բորգի Թիֆլիսի Ժողովարանում տալու է մի կօնցերտ՝ հայոց Բարեգործական ընկերութեան օգտին: Շնորհալի երգչուհու անունը, և կօնցերտի նպատակը բաւական է արդէն համոզված լինելու, որ այսօր Ժողովարանի դահլիճը կատարելապէս լի կը լինի հասարակութեամբ:

—

Յունվարի 14-ից, Պետերբուրգից, հեռագրում են «Тифлисскій Листокъ» լրագրին, որ Մոսկվայում կազմակերպվում է մի պատկերազարդ գրականական գիտնական ժողովածուի հրատարակութիւնը, որի արդիւնքը պէտք է յատկացնվի Ռուսաստան ապաստանած հայ գաղթականներին:

—

Յունվարի 13 ին Թիֆլիսի Նահանգական դատարանում քննվեց Հաղբատի վանահայր Նորատունկեան Յակոբ վարդապետի սպանութեան գործը: Սպանութեան մէջ մեղադրվում էին Այվազով, Քալանթարեան և Ելիզբարովա: Գործի զեկուցումից երևաց, որ 1895 թ. դեկտեմբերի 27-ին Հաղբատի վանքում, մի քանի զինուորված չարագործներ մտնում են գիշերով վանահայր Յակոբ վարդապետի խուցը և սպանելով նրան կողոպտում են եղած գոյքը, որի թւում փողը և ճերմակեղէնը: Այդ ոճիրը կատարելու մէջ մեղադրվում էին Նիազ Այվազով, Սարգիս Քալանթարեան, Սերգէյ Հովսէեան, Նիազի քոյր Ելիզբարովայի մասնակցութեամբ: Դատարանը քննութիւնից յետոյ կայացրեց հետեւեալ վճիռը. ճանաչել Նիազ Այվազովին մեղաւոր Նորատունկեան վարդապետի սպանութեան մէջ և զրկելով նրան բոլոր իրաւունքներից՝ ենթարկել տաժանակիր աշխատանքի 12 տարով: Մնացածներին համարել արդարացած:

—

Ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, Բագուի դրամատէր Առաքել Ծատուրեան, Պետերբուրգից ուղարկել է հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնին՝ 10 000 րուբլի:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Նոր տարվայ գիշերը, քաղաքային դպրոցի դահլիճում, կայացաւ Բարեգործական ընկերութեան Ախալքալաքի ճիւղի սովորական երեկոյթը, որը ընդհանրապէս աջող անցաւ: Չը նայելով, որ ծառայողները և ունեւոր դասակարգի մի մասը բացակայ էին, մուտքը բաւարար էր, և զուտ արդիւնք մնաց 122 րուբլի: Ցանկալի է, որ այդպիսի մի երեկոյթ էլ աջողվէր գաղթականների օգտին»:

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Ի լրումն անցեալ անգամ հաղորդած լուրի, հարկաւոր ենք համարում հաղորդել, որ յունվարի 5-ին «Աւետիս» շրջող խումբը, ժողովրդի ցանկութեամբ, շարունակեց հանգանակութիւն նաև երկրորդ օրը և հաւաքած գումարը հասցրեց մօտաւորապէս 450 րուբլու: Միտք կայ մի ներկայացում տալ գաղթականների օգտին ազնուականների ժողովարանում: Նոյն նպատակով Գասպարեան անկելանոցը դարձեալ շարունակում է ընդունել չորեղէն նուէրները»:

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան վարչութիւնը Ծննդեան երեկոյեան, գաղթականների համար ընթրիք պատրաստելու փոխարէն, ամեն մի հոգուն քառասնական կոպէկ փող բաժանեց: Նոյն օրը 50 րուբլի էլ ընկերութեան հիմնական դրամից բաժանվեց տեղական աղքատներին և հին գաղթականներին: Բացի դրանից, այստեղի հարուստներից՝ Զաքար Ջանփոլադեան Վանի բոլոր գաղթականներին և միւս կողմերի նորեկ գաղթականներին նոյնպէս քառասնական կոպէկ փող բաժանեց իր կողմից: Իսկ տեղական կառավարութիւնը նոյնպէս փող բաժանեց աղքատներին անխտիր կերպով, թէև աւելի առատ՝ բայց քիչ ընտանիքների: Հետեւաբար գաղթականները Ծննդեան տօն օրերը լիացած կերպով կանցնեն: Սակայն այդ ուրախ օրերին դժբաղդաբար յաջորդելու են դառն օրեր, որովհետև այլ ևս դրամ չը կայ, եղածն էլ հազիւ բաւականութիւն տայ հիւանդանոցի կարիքներին, այն ևս մի քանի օրով: Նախկին նամակներում մոռացել էինք յիշել, որ վարչութիւնը ստացել է նաև Շուշուց, տ. Աթաբէգեանից 120 կտոր հագուստներ: Ի դէպ, բժիշկ Գ. Կաճկաճեանի ստացած 300 րուբլին ոչ թէ Մոսկվայից էր, ինչպէս գրվել էր սխալմամբ, այլ՝ Վարշավայից»:

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղը մի ամսից ի վեր պատրաստվում էր յօգուտ գաղթականների մի երեկոյթ տալ, որի համար Նահանգապետից թոյլտւութիւն ստացվել էր: Սակայն Բարեգործական ընկերութեան ճիւղի նախագահը զբաղված լինելով մասնաւոր գործերով, յիշեալ երեկոյթը օրից օր յետ էր գցում, որի պատճառով հասարակութեան մէջ մեծ զայրոյթ է առաջ եկել: Մի երկու օր առաջ քաղաքային կլուբը որոշեց յօգուտ գաղթականների, յունվարի 11-ին, կլուբի դահլիճում մի երեկոյթ կազմել: Այդ նպատակով մի յանձնաժողով է ընտրվել հետեւեալ անձինքներից: Տ. Երանուհի Տիգրանեանց, տ. Ելէնա Ստօլչանսկայա, օր. Մարիա Վոդոպյանովա (պրօգիմնազիայի կառավարչուհի), պ. Գրիգոր Վէքիլեան և պ. Զուրաբ Կոստանեան: Այս խումբը պտտեց հարուստների տները և հաւաքել է արդէն հազար րուբլի: Պիտի պտտեն և մագազինները. յոյս ունենք, որ մինչև երկու հազար րուբլի հաւաքվի այս նպատակի համար: Մեր գաւառապետը նահանգական կառավարութիւնից թոյլտւութիւն է խնդրել, որպէս զի այս փողերը գործադրվեն մեր քաղաքում և գաւառում գտնված գաղթականների համար. յոյս ունենք, որ նահանգական կառավարութիւնը չը պիտի մերժէ»:

—

ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ մեզ գրում են. «Յունվարի 5-ին մի խումբ երիտասարդներ «Աւետիս» ման եկան և հաւաքեցին 100 րուբլի յօգուտ գաղթականների: Դեռ ևս փողը չէ բաժանված գաղթականներին: Լսեցինք, որ թատերասէրների խումբը պատրաստում է մի երկու ներկայացում տալ յօգուտ նոյն գաղթականների»:

—

ՂԱԶԱԽ գաւառի Վերին-Աղդան գիւղից մեզ գրում են. «Դեկտեմբերի 29-ին ուսումնարանի դահլիճում տեղի ունեցաւ մանկական երեկոյթ, որին ներկայ էր երկու սեռի ահագին բազմութիւն: Չը նայած ցրտին, դուրսը լցվել էին և պատուհաններից նայողներն էլ շատ բազմաթիւ էին: Երեկոյթը կազմված էր երգերից, մանկական ընտիր յօդուածների ընթերցումից և բերանացի բանաստեղծութիւններից: Ժողովուրդը այնքան սիրեց այդ երեկոյթը, որ տանուտէրի բերանով յայտնեց իր շնորհակալութիւնը թէ հոգաբարձութեան և թէ ուսուցիչներին, որոնց ի պատասխան Մեսրոպ քահանայ Եղիկեանց խօսեց ուսումնարանի նշանակութեան մասին: Դրան յաջորդեց ժողովրդի շնորհակալութիւնը պ. Սամսոն Յարութիւնեանցի հասցէին, որը դպրոցի բացման նախաձեռնողն եղաւ: Երեկոյթից յետոյ բացվեց տօնածառը բենգալեան կրակով. վերջը տեղական պար եղաւ: Ուսումնարանը հիւրերին պատուեց համեստ ընթրիքով և մրգեղէնով: Աշակերտները ստացան միրգ և ընծայ: Երգեցիկ խումբը զանազանվում էր միւսներից կրծքներին կպցրած աստղանշաններով, իսկ կարդացողները—կարմիր խաչերով: Ջութակի վրա ածում էր ուսուցիչ Ա. Շաթիրեանց: Ծափահարութիւններին վերջ չը կար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Միւնիր-բէյի հեռագիրը

Ֆրանսիական լրագիրներին Կ. Պօլսից գրում են. «Մեծ իրարանցում գցեց Իլդիզ Քեօսկում Պարիզի օսմանեան դեսպան Միւնիր-բէյի մէկ հեռագիրը, որի մէջ պատմված էր Միւնիր-բէյի խօսակցութիւնը Հանօտօի հետ: Պարիզի դեսպանը ասում է, որ համաձայն իրան ուղարկած հրահանգների, ինքն մի մի թւեց պ. Հանօտօին այն զանազան ռէֆօրմները, որ կայսերական կառավարութիւնը ձեռնարկել էր մտցնել (քրիստոնեայ պաշտօնեաներ նշանակելը, ժանդարմերիայի վերակազմութիւնը, ընդհանուր ներումն և այլն), նոյնպէս և այն միջոցները, որ Բ. Դուռը մտածում է գործադրել: Երբ ինքն հասաւ Հանրային Պարտքի յօդուածին, պ. Հանօտօ, որը մինչև այդ լսում էր առանց մի խօսք ասելու, ընդհատեց իրան և ասեց, թէ անօգուտ է այլ ևս շարունակել, թէ համաձայնութիւնը վեց պետութիւնների մէջ, ոչ միայն օսմանեան Հանրային Պարտքի, այլ և ռէֆօրմների վերաբերմամբ, կատարեալ է, առանց որ և է բացառութեան, և թէ շուտով դեսպանները Կ. Պօլսում մատնացոյց կանեն օսմանեան կառավարութեանը այն միջոցների վրա, որ որոշել է եւրոպական կօնցերտը: «Այդտեղ պ. Հանօտօ վերկացաւ տեղից, և ես, վերջացնում է Միւնիր բէյ, տեսայ, որ ունկնդրութիւնը աւարտվեց»:

«Այդ հեռագրի բովանդակութիւնն իմանալուց յետոյ իսկոյն սուլթանը կանչել տուեց Իզզէտ-բէյին, որի ազդեցութիւնը վերջերս օրից օր պակասում էր, և հրամայեց նրան ֆրանսիական դեսպանատունը գնալ պ. Կամբօնից մի որ և է բացատրութիւն լսելու համար: Դեսպանը շատ սառն ընդունեց Իզզէտ-բէյին: Լսելով պ. Կամբօնի պատասխանների յուսահատական լակօնականութիւնը, նա փորձեց բացատրել իր միսիայի նպատակը, մեծ գովասանքներով յիշատակելով այն ռէֆօրմները, որոնց համար Եւրօպան պէտք է երախտագէտ լինի փադիշահին:

«Երբ նա սպառեց իր ճարտարախօսութիւնը, պ. Կամբօն նրան կարճառօտ կերպով ասեց.

—«Իզզէտ բէյ, դուք խելօք և զօրեղ մարդ էք: Բացի դրանից, դուք սիրիացի էք: Դուք հասաք մի այնպիսի հետեւանքի, որին ահա մօտ 50 տարի է իզուր աշխատում են հասնել եւրոպական պետական մարդիկ, այն է կատարեալ համաձայնութեան բոլոր պետութիւնների մէջ Արեւելեան հարցի վերաբերմամբ: Ես այլ ևս բան չունեմ ձեզ ասելու:»

«Ինչի մէջն է կայանում ռէֆօրմների այն ծրագիրը, որ պէտք է առաջարկվի սուլթանի վաւերացմանը: Ճիշդը յայտնի չէ: Սակայն խօսում են մի քանի կէտերի մասին: Մէկը վերաբերում է Դարդանէլլի ազատ անցնելուն, որի ամրութիւնները պէտք է քանդվեն: Ինչ վերաբերում է Բօսֆորի ծոցին, նա կը մնայ Ռուսաստանի վերահսկողութեան տակ, Սեւ ծովը մի տեսակ ռուսաց լիճ դառնալով: Երկրորդ կէտը վերաբերում է եւրոպական ֆինանսական կօնտրոլ հաստատելուն Թիւրքիայում, որը պէտք է գանձէ կայսրութեան բոլոր եկամուտները և պէտք է անէ բոլոր ծախսերը: Օսմանեան մի փոխառութիւն, որի գումարը մի միլիարդից պակաս չը պէտք է լինի, պէտք է կատարվի վեց պետութիւնների երաշխաւորութեամբ: Եթէ որ սուլթանը, եւրոպական ծրագիրը հրատարակելուց յետոյ, մերժումով կը պատասխանի կամ կաշխատի ձգձգել գործը դիմելով իրադէների հրատարակութեանը, պետութիւնները իրանց կամքը գործադրել կը տան ուժով»:

Մի գերմանացի յայտնի արեւելագէտ, Ալբերտ Վեբեր, մի քաղաքական նամակի մէջ, որ ուղարկել է պրօֆեսօր Գուբերնատիսին, խօսելով Արեւելքի մասին, ասում է հետեւեալը. «Մարդկութեան բարեկամները պէտք է շատ բաւական լինեն այն բոլորից, ինչ Ռուսաստանը անում է Կենտրոնական Ասիայում, ուր իսկապէս նա մտցնում է քաղաքակրթութիւն և առաջադիմութիւն. բայց Եւրօպան չէր ցանկանայ, որ Ֆրանսիայի աջակցութեամբ Ռուսաստանը գրաւէր Կ. Պօլիսը, որովհետեւ պատմութեան ընթացքը և իրերի լօգիկան պատրաստել են սուլթանի ժառանգութիւնը Իտալիայի համար: Որչափ և դժուար հաւատալի երեւայ այդ կարծիքը ներկայումս, նա ունի իր լուրջ հիմունքները: Եւրօպան հանգիստ սրտով կարող է թոյլ տալ այդպիսի մի ժառանգութիւն, որ իր մէջ ոչ մի լուրջ սպառնալիք չէ բովանդակում Եւրօպայի դէմ»:

—

Ապացուցանելու համար, որ Անգլիան հայոց հարցում ոչինչ շահ չունի, «Daily News» լրագիրը առաջ է բերում հետեւեալ փաստը: «Կապոյտ գրքի» մէջ բերված է Լասելի խօսակցութիւնը, որ նա ունեցել է հանգուցեալ իշխան Լօբանով-Ռօստովսկու հետ Թիւրքաց գործերի մասին: Իշխանը ասել է հետեւեալը: «Ռուսաստանը միշտ նկատված է եղել իբրև Թիւրքիայի իշխանութեան տակ ապրող քրիստոնեաների պաշտպան և նա երջանիկ պէտք է լինէր պաշտպանելով նրանց կեանքը և հովանաւորելով նրանց ստացուածքները: Բայց նրա սահմանագծի անմիջական շահերը արգելում են Ռուսաստանին ընկնելու մարդասիրական երազների մէջ, որոնք նախամեծար տեղ են բռնում Անգլիայում, որի շահերը չեն չօշափվում շնորհիւ նրա կղզիացած դրութեան, և հայկական երկիրներից հեռու լինելուն»:

—

Յայտնի թիւրքասէր Աշմէտ Բարտլէտ, որ նորերս այցելեց Կ. Պօլիսը և արժանացաւ սուլթան Աբդուլ-Համիդի ունկնդրութեան, Լօնդօն վերադառնալիս մի տեսակցութիւն է ունեցել «Neue Freie Presse» լրագրի խմբագրութեան հետ: Նա յայտնում է, թէ ինչ որ սուլթանը իրան ասել է, իրաւունք չունի հաղորդելու, բայց անձնապէս նա այն համոզմունքն է դուրս բերել Կ. Պօլսից, թէ ամենեւին դժուար չէ փոփոխութիւն առաջ բերել գործերի դրութեան մէջ Բօսֆորի ափերում, որտեղ այժմ Ռուսաստանը տիրապետող դեր է խաղում: Դրա համար հարկաւոր է, որ Անգլիան հրաժարվի իր թշնամական վերաբերմունքից դէպի Թիւրքիան և միանայ երեքպետեան դաշնակցութեանը: Միայն այդ կերպով կարելի կը լինի խափանել, որ Կ. Պօլիսը և Դարդանէլը Ռուսաստանի ձեռքը չանցնեն: Առաջին պայմանը այդ նպատակին հասնելու համար, Բարտլէտի կարծիքով, դեսպան սըր Ֆիլիպ Կէրրիի յետ կանչելն է: Կէրրի դիպլօմատ չէ, այլ բիւրօկրատ, որին պ. Նելիդօվ մոլորեցնում է: Անգլիայի, Աւստրօ-Ունգարիայի և Գերմանիայի ընդհանուր շահերը պահանջում են, որ Նեղուցները և Կ. Պօլիսը Ռուսաստանի ձեռքը չանցնեն: Բարտլէտը սկսել է եռանդուն կերպով պրօպագանդա անել այդ մասին:

—

«Times» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ փետրվարին վերջնականապէս պատրաստ կը լինի ռէֆօրմների ամբողջ ծրագիրը: Ինքը սուլթանը խոստովանել է (?) Թիւրքաց վարչութեան արմատական պակասութիւնները:—Երկու տարի է ծրագիրներ են մշակում, և դեռ փետրվարին միայն պատրաստ կը լինի: Դա, ճշմարիտ, կատակ է:

—

Անգլիական պարլամենտի առաջին նիստը, ինչպէս հեռագրում են Լօնդօնից «Нов. Время» լրագրին, շատ հետաքրքրական էր: Լորդ Սօլսբիւրի յայտնեց, թէ Անգլիայի քաղաքականութիւնը արեւելեան հարցում վերջին քառասուն տարվայ ընթացքում՝ սխալ դուրս եկաւ։ Ամենագլխաւոր և խոշոր սխալը գործեց յիսնական թւականներին՝ ազատամիտ կաբինէտը, որը մերժեց Նիկոլայ I կայսրի առաջարկութիւնը Թիւրքիան բաժանելու մասին։ Եթէ Ռուսաստանը այժմ նորից դիմէր Անգլիային այդպիսի ծրագրով, նա կընդունվէր անգլիական կառավարութիւնից ամենամեծ ուրախութեամբ։ Որպէս զի աւելի փայլուն կերպով նկարագրի այդ պատմական սխալի նշանակութիւնը, որի հետեւանքները այնքան ծանր կերպով ցոլանում են անգլիական քաղաքականութեան վրա, մարկիզ Սօլսբիւրի նմանեցրեց Անգլիան այն սպորտսմէնին, որ իր ամբողջ կարողութիւնը դրել է մի ձիու վրա, որը չը տարաւ գրավը և չարդարացրեց նրա վրա դրած յոյսերը։ Ամբողջ Անգլիան այժմ ինքն համոզվեց, թէ Թիւրքիայի վրա դրած իր յոյսերը նոյնպէս չարդարացան։

—

Րէյտէրի գործակալութիւնը հեռագրում է, որ ֆրանսիական դեսպանի միջամտութեան շնորհիւ, խաչքեօի հայ առաջնորդ հայր Եզնիկ ազատութիւն է ստացել։ Ինչպէս յայտնի է, Թիւրքաց արտակարգ յանձնաժողովը դատապարտել էր խաչքեօի առաջնորդին մահվան պատժի իբրև քաղաքական մի յանցաւորի։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, յունվարի 2-ին

Ուրմիոյ հինաւուրց և մեծահռչակ գերդաստաներից, Սուլջայի դուլէ տոհմից, փոխ. գեներալ Ջմշտ խանը, որ կոչվում է նաև Սամբալ-Նիզամ և որին վերջերումս Շահը «Էմիր-Թումանի» տիտղոսն էլ բարեհաճեց շնորհել, նշանակվեց Սալմաստի և Սօմայի գաւառների պաշհաքիմ և արդէն այս օրերս ուղևորվեց իր պաշտօնատեղին։ Բոլոր ուրմեցիք վկայում են նրա մի բարեսիրտ, ազնիւ, կրթեալ մարդ լինելը։ Տարակոյս չը կայ, որ նրա ներկայութիւնը Սալմաստում մի մեծ գրաւական պիտի համարվի և ինչպէս էլ լինի Շահի բարի տրամադրութիւններին դէպի իր սիրելի և հաւատարիմ հայ հպատակները, որոնք այժմ անզօր սրտով պիտի Լարդարման վայելել մի կարող և ազնիւ կառավարչի հովանաւորութիւնը և պաշտպանութիւնը ընդդէմ չարամիտ և խռովարար կրօնամոլ թիւրքերի, որոնք այնքան աշխատեցին կտրել մուղդրեան վարկը վեհափառ Շահի աչքում։

Վասպուրականից հայերին Ամերիկա գաղթեցնելու նպատակով այս կողմեր եկող Մր. Վիլարդ Հավարդը վերջապէս ձեռնունայն վերադարձաւ դէպի Թիֆլիս։ Նա կատաղած էր Սալմաստի ազնիւ հայ երիտասարդութեան դէմ, որը արգելք էր դարձել նրա ազգավնաս ծրագրի իրագործվելուն։ Նրա հետ քաղաքիցս մեկնեց ազնիւ մի ամերիկացի, Մր. Ալլէնը, Վան վերադառնալու համար, ուր նա պիտի տանձնէ ցրնդած և խաւարամիտ դոկտոր Ռայնոլդսի փարած մեծ գործի ղեկը, որի դէմ այնքան իրաւացի տրտունջներ, ամբաստանութիւններ են լինում լրագիրների էջերում։

Քաղաքիս նորընտիր Սարփարազ փոխ. Միրզա Հիւսէին խան Միրբէնջը՝ որ Վանի մէջ 8 տարի պարսկական գեներալ-կօնսուլի պաշտօն էր վարել, արդէն այստեղ հասած է և սկսել է ընթացիկ գործերի կարգադրութեամբ զբաղվել. նրա գործակատարն է հայազգի մի երիտասարդ, պ. Սիմօն Տէր-Յարութիւնեանց և յուսալի է, որ օգտաւէտ ծառայութիւն կը մատուցանէ Ուրմիայի բազմակարօտ քրիստոնեայ ազգաբնակութեան։

Վանից, դեկտեմբերի 10-ից, գրում են, որ երկու բարձրաստիճան ռուս պաշտօնեայք հասել են այնտեղ, որոնցից մէկը իր հետևորդներով իսկոյն ուղևորվել է դէպի Բիթլիզ։

Այս շաբաթ Ուրմիայում առատ ձիւն տեղաց. այժմ մի սաժէն բարձրութեամբ սպիտակ սաւանի ներքև է ամբողջ քաղաքը։ Օդը լաւ է և ցուրտը մեղմ։

Արգոս

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնից, Կարապետ եպիսկոպոս Այվազեան խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Ստանալով բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ զանազան քաղաքներից՝ Շամախու թեմի առաջնորդ հաստատվելուս առիթով և հնարաւորութիւն չունենալով իւրաքանչիւրին առանձին ուղարկել իմ օրհնութիւնը և շնորհակալութիւնը, թոյլ տուէք խնդրեմ ինձ՝ կատարել այդ երկտողիս՝ «Մշակի» միջոցով»։ Թող ների Շուշու թեմի նախկին առաջնորդը մեր հարցասիրութիւնը,—բայց շատ հետաքրքիր ենք իմանալու, թէ այդ «բազմաթիւ» շնորհաւորութիւնները որտեղից են՝—եթէ Ղարաբաղի թեմի քաղաքներիցն են, դա շատ հասկանալի է. եթէ Շամախու թեմի քաղաքներից՝ դա շատ զարմանալի է…

⁂

Պարիզի լրագիրները հաւատացնում են, որ Ռուսաստանը Թիւրքիայից խոստում է առել Տրապիզոնից երկաթուղու գիծ անցկացնել Փոքր-Ասիայի միջով՝ միացնելու Պարսկաստանի երկաթուղային գծի հետ։ Այդ գծի անցկացնելով Հերաթը, որ գտնվում է Աւգանիստանում, կը միանայ Սեվաստոպոլի հետ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 13 յունվարի։ Համալսարանը տօնեց 142-րդ տարեդարձը։ Պատարագից յետոյ համալսարանական եկեղեցում հանդիսաւոր ժողով կայացաւ համալսարանի դահլիճում, ներկայութեամբ Օգոստափառ գեներալ—նահանգապետի, նրա ամուսնու, քաղաքացիական և զինուորական իշխանութիւնների և համալսարանական պէրսօնալի։ Նոցա Բարձրութիւններին դիմաւորեց համալսարանական իշխանութիւնը։ Ուսանողներից մէկը մատուցեց մի չքեղ փունջ Մեծ Իշխանուհուն։ Ժողովը բացվեց պրոֆեսոր Մրոչէկ-Դրոզդովսկու ճառով։ Ռէկտորի օգնականը կարդաց համալսարանի հաշիւը 1896 թւի համար։ Ապա մեդալներ բաժանեցին ուսանողներին Նոցա Բարձրութիւնները և Նէստոր եպիսկոպոսը։ Հանդէսը վերջացաւ հիմնով և միաձայն «ուռայով»։

ՊԱՐԻԶ, 13 յունվարի։ Բարօն Մօրենհէյմ տեղեկացրեց Հանօտօին, որ կօպէնհագէնից կոմս Մուրավիէվ կերթայ Պարիզ տեսակցելու հանրապետութեան նախագահի հետ և ֆրանսիական մինիստրների հետ յարաբերութիւններ հաստատելու համար։ Կոմս Մուրավիէվ Պարիզ կը գայ հինգշաբթի և կը մնայ 48 ժամ։ Հինգշաբթի, երեկոյեան, Ելիսեան պալատում տեղի կունենայ պաշտօնական ճաշ։

ՍՕՖԻԱ, 13 յունվարի։ Կ. Պօլսի դեսպանների ընդունած որոշման համաձայն, որ Կրետէի ժանդարմէրիայի ստորին պաշտօնեաները պէտք է լինեն բօսնիացիներ, բոլգարներ և չէրնօգօրցիներ, պետութիւնների ներկայացուցիչները առաջարկեցին իշխանական կառավարութեանը ընտրել այդ նպատակի համար 30 ժանդարմներ և ուղարկել իրանց պաշտօնատեղին։ Առաջարկութիւնն ընդունվեց։

ՄՕՍԿՎԱ, 14 յունվարի։ Յունվարի 13-ին, Սամարայից 492 վերստ հեռու «Շաֆրանովկա» և «Բամեւկայ» կայարանների մէջտեղ, խորտակվեց երկաթուղիական գնացքը։ Կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Ջարդված են 11 վագօններ։ Սպանված են 2, վիրաւորված են մօտ 20 մարդիկ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ, 14 յունվարի։ Կոմս Մուրավիէվ առաջ ճանապարհ է ընկնելու Վիսբադէն ազգականների մօտ, ապա Պարիզ։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ, 14 յունվարի։ Վերին-Եգիպտոսում սուդանական զօրաբաժինը, անգլիական օֆիցէրի հրամանատարութեամբ, կենդանի այրեց, այդ օֆիցէրի հրամանով, 8 յանցաւորներին, որոնք գտնվեցին մի տան մէջ։ Այդ վարմունքը սարսափ տարածեց հասարակութեան բոլոր խաւերում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունվարի։ Բարձրագոյն հրաման. Որպէս զի ժանտախտ հիւանդութիւնը մեր սահմանները չը մտնի և կարելի լինի կռուել նրա դէմ, եթէ կը տարածվի կայսրութեան մէջ, անհրաժեշտ համարեցինք հիմնել մի յանձնաժողով և ամենաողորմածաբար հրամայում ենք Նորին Բարձրութիւն պրինց Ալեքսանդր Պետրովիչ Օլդէնբուրգսկուն՝ նախագահ լինել այդ յանձնաժողովի։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 14 յունվարի։ Պալատում կայացաւ սէյմի հանդիսաւոր բացումը։

ԲԵՐԼԻՆ, 14 յունվարի։ Պաշտօնական տեղեկութիւն է ստացված, որ արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Մուրավիէվ այս օրերս կարճ ժամանակով կը գայ այստեղ և կընդունվի կայսրի կողմից։

Կ. ՊՕԼԻՍ, 14 յունվարի։ Դեսպանների ընդունած որոշման համաձայն, թէ Կրետէի ժանդարմէրիայի հրամանատարը չը պէտք է պատկանի մեծ պետութիւններից որ և է մէկի զօրքին, դիմեցին Բէլգիային և Հօլանդիային՝ առաջարկելով նշանակել վերոյիշեալ հրամանատարին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Բժշկական դեպարտամենտից։ Ի նկատի ունենալով Հնդկաստանում ժանտախտի տարածվելու վերաբերեալ տեղեկութիւնները և ներկայ պայմաններում, նրա զանազան մասերում հիւանդութեան տարածվելու կատարեալ հնարաւորութիւնը, ներքին գործերի մինիստրը, ֆինանսների մինիստրի համաձայնութեամբ՝ կարգադրութիւն արեց յայտարարել ամբողջ Հնդկաստանը վտանգաւոր ժանտախտի կողմից։

ՀՌՕՄ, 15 յունվարի։ Կ. Պօլսից հաղորդում են, որ Իտալիայի և Ֆրանսիայի դեսպանները պահանջեցին, որ թարգմանները բողոք յայտնեն Հալէպի դատարանի դէմ, որը պէտք է քննէ Մազար-բէյի գործը հայր Սալվատորի սպանութեան մէջ մեղադրվելու մասին։ Նրանից հրամանագրված է նոյնպէս ներկայ չը լինել գործի քննութեան, որովհետև դատարանը մեծ մասամբ բաղկացած է մի և նոյն անձերից, որոնք արդարացրին Մազար-բէյին Մարաշում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 14-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	93 ր.	75 կ.
Բեռլինի վրա 100 մարկ — . .	45 ›	90 ›
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 ›	$22^{5}/_{8}$ ›
Ոսկի — — արժէ . .	7 ›	50 ›
Մաքսային կուպօններ — . .	149 ›	— ›
Բօրսային դիսկօնտ — . .	$5^{3}/_{4}$—7	— ›
4% պետական ռենտա	$99^{3}/_{8}$ ›	— ›
Ներքին 5% առաջին փոխառութ.	286 ›	— ›
— — երկրորդ —	261 ›	— ›
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	213 ›	— ›
5% պետական երկաթուղ. ռենտա	— ›	— ›
4% ներքին փոխառութեան .	$98^{3}/_{4}$	— ›
$4^{1}/_{2}$% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101 ›	— ›
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	— ›	— ›
$4^{1}/_{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	101 ›	— ›
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	— ›	— ›
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ ընկերութեան օբլիգացիաներ.	$101^{7}/_{8}$ ›	— ›
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^{1}/_{4}$ ›	— ›
Օդէսայի — —	$101^{3}/_{4}$ ›	— ›
Թիֆլիսի — —	$98^{3}/_{4}$ ›	— ›
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	$102^{1}/_{4}$ ›	— ›
5% — — — . .	$99^{1}/_{8}$ ›	— ›
Քութայիսի — — . .	$102^{1}/_{2}$ ›	— ›
5% — — — . .	$99^{1}/_{8}$ ›	— ›

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ է տալիս գեղեցիկ առոգանութեամբ

ՄՈՒՐՏԱԳ

որին կարելի է տեսնել ամեն օր ժամի 1-ին Ռոստոմ Մարտիրոսեանի տանը, Ալէքսանդրեան այգու հանդէպ։ Իր բնակարանում դասերը աւելի էժան են, քան տներում։ (№ 6) 1—5

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑՔԸ

Բացվում է յունվարի վերջերում։ Ցանկացողները կարող են գրվել այժմեանից Գանօվսկայա փողոցում, № 25։ 2—2

ՄԱՍՍԱԺ

Բժիշկների ղեկավարութեան տակ, պարապում եմ զանազան հիւանդութիւնների բժշկելով ՄԱՍՍԱԺՈՎ և առողջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ $5^{1}/_{2}$—$6^{1}/_{2}$ ժամը երեկոյեան։ Աւչալեան փողոց, № 49։

2—148 ԳԷՈՐԳ ԽՈՍՐՈՎԵԱՆՑ

Կ. Հ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհուրդը յայտնում է ի գիտութիւն Թիւրքիայից փախած հայ գաղթականների, որ բոլոր հիւանդ գաղթականները կարող են դիմել բժշկապետ Բագրատ Նաւասարդեանին, որ յանձն է առել ձրիաբար բժշկել նրանց, ամեն օր, բացի կիրակի օրերից, առաւօտեան ժամը 11—12-ին իր հիւանդանոցում, ինչպէս և յանձն է առել այցելելու նոյնպէս ձրիաբար, տանը պառկած չքաւոր հիւանդներին։ (№ 3) 4—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
Հինգշաբթի, յունվարի 16-ին
ԿԱՅԱՆԱԼՈՒ Է
Յայտնի երգչուհի
ԱԴԷԼԲՕՐԳԻ
ԿՕՆՑԷՐՏ
(„Կարմէն“ օպէրայի նոմերներից կազմած)
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տոմսակները 5, 4, 3, 2 ր. 60 կոպէկ՝ 2, 1 ր. 50 կոպէկ և 1 րուբլի ծախվում են Բագրատ Միրիմանեանցի երաժշտական մագազինում և կօնցէրտի օրը ժողովարանում։ 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, թէ համաձայն իր որոշման 28 դեկտեմբերի 1896 թւի, որ հաստատել է Թիֆլիսի պարոն նահանգապետը 8 յունվարի 1897 թւի նա ձեռնարկել է

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

կազմելուն, որով պէտք է կատարվին 1897—1901 քառամեակի քաղաքային Դումայի իրաւասուների ընտրութիւնները՝ ընտրողների ժողովում, որ նշանակված է 1897 թ. մայիսի 18-ին կիրակի օր։

Յիշեալ ցուցակի մէջ պէտք է մտցվին (համաձայն Քաղաք. կանոն. 24 յօդ.) Ա. այն մարդկանց անունները, որոնք ռուսահպատակ են, նոյնպէս և բարեգործական, գիտնական և ուսումնական հաստատութիւնները և կառավարչական այն հաստատութիւնները, որոնք առ նուազն մի տարով, Թիֆլիսի քաղաքի սահմանում, սեպհականութեան կամ ցմահ տիրելու իրաւունքով տիրում են այնպիսի անշարժ կայքի, որը ենթարկված է յօգուտ քաղաքի վերցնվող գնահատական տուրքի, և այդ տուրքն առնելու համար եղած գնահատման միջոցին առնուազն 1.500 րուբլի արժէ։ Բ. այն ռուսահպատակ անձերը և պետութեան օրէնքների հիման վրա հաստատված ընկերութիւնները, ընկերակցութիւնները ու միութիւնները, որոնք Թիֆլիսի քաղաքի շրջանում առնուազն մի տարի պահում են, ինչպէս անձինք, նոյնպէս և հաստատութիւններ, այլ և առևտրաարդիւնագործական ձեռնարկութիւնները, առաջին կամ երկրորդ կարգի գիլդիական վկայականներ են վերցնում։ Քաղաքային Վարչութիւնը պարտք է համարում նաև աւելացնելու, որ ընտրողների ցուցակները պատրաստ կը լինին, համաձայն իր նոյն որոշման, առ 1-ն փետրվարի 1897 ամի։ Ուստի ով որ ուզում է իր անունը մտնել յիշեալ ցուցակների մէջ, պարտաւոր է մինչև 1897 թւի յունվարի վերջը վճարել իր վրա եղած քաղաքային առ 1-ն յունիսի 1896 ամի եղած տուրքը, որպէս զի նրանց վրա այդ տուրքերի պարտքը կէս տարվայ գումարից աւելի չը լինի (Քաղաք. կանոն. 33 յօդ. 8 կէտ.)։ (№ 6) 1—3

ԲԵՐՏԷ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տունը (որը գոյութիւն ունի 1868 թւից) պատիւ ունի յայտնելու պ.պ. շերամապահներին, որ ԲԱՂԴԱԴԻ ՍՊԻՏԱԿ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՂԻՆ ԲՕԺՕԺԻՑ ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՍԵՐՄԸ գնել ցանկացողները գնի և պայմանների մասին պէտք է դիմեն Կովկասի և Պարսկաստանի ներկայացուցիչ ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ հետևեալ հասցէով՝ БАТУМЪ, Бр. Мнацаканянцъ.
(№ 146) (:) 7—12

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Января 1897 г.
Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д каз.